

Հ Ա Ս Յ Է

Rédaction du Journal arménien

ARCHALOUYCE

(EGYPTE)


LE CAIRE



Ձի հրատարակումը ձեռագիրները  
ևս չեն սրուիր :

Բաժանորդագրությունը կանխիկ է, իսկ  
ծանուցումները կ'ընդունուին մասնա-  
ւոր համաձայնությամբ :

Գրքեր - Կեր - Խմբագրություն  
ԵՂՈՒՆԷ ԹՈՐՈՍԵԱՆ



ԱՐՁԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԻ ՀԱՅԱՐԵՐԹ

ՊՈՏՄՈՆԲ


ԵՂԻՊՏՈՍ

Տարեկան գրք - ուղ 30

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Տարեկան ֆրանկ 10

Բաժանորդ ՅԱՒԵՆՈՒՍՍ ԵՆՐՈՒ փոխառեց  
վեճարժէ գեղծ պիտի բլլան :



Թի' ԱՐՇԱՂՅՈՒ և թի' ՏՊՈՐԱՆԻՆ  
վերաբերեալ ներքախնի խնդրոց հաւար  
պիտի է ղիտել ներքագրութեան հասցեով  
ներքիս Մասնագրութեան, որ է :

ԳՆՈՐԿ ՓՈՒՎԱԶՆԱՆ

ԿԸ ՇՐՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ՕՐԲԵՐ Ը

Յօդուածագրութեան ուղղակի պատասխան  
տալ և՛ իրենց գրածներու

ZUSC 40 ՓԱՐԱ ՈՂ Ը

ՈՃՐԻՆ ՎԵՐՋԱԲԱՆԸ

« Մարդու մահուան պատկերները,  
անոր կեանքի կատարման մեկ-  
նորից և ուրիշ բաների մասին է շատ  
անգամ : »

Արժիւար սպաննուեցաւ և դա-  
տարանը, այս եղի՞նք մէջ, իր  
վերջին խօսքը ըսաւ՝ ձերբակալեալ-  
ներէն մին մահուան դատապարտե-  
լով և միւսը ազատ արձակելով :

Այս վճիռը անաչառ վճիռ մը  
ըլլալով հանգեցած - անաչառ, վասն  
զի մեզմէ զգացումով, իտէալով և  
արտակցութեամբ անհունապէս հե-  
ռու անհասնեալու կողմէն արձակ-  
ուեցաւ - այս վճիռը զիս չի գոհա-  
ցուց : Կարծես թէ չ'աւարտած դըր-  
քի մը առջև կը գտնուի ինքզինքս :  
Գործուած ոճրին առջև մարգասպա-  
նին պատասխանատուութիւնը չա-  
փելու և անկէ ուրիշներու ալ մաս  
հասնելու համար, գէթ անհրաժեշտ  
էր գիտնալ թէ՛ Արժիւար ինչո՞ւ ըս-  
պաննուեցաւ : Կէտ մը, որ ինչպէս  
մուտ էր դատաւարութենէն առաջ,  
վճիռէն ետքն ալ մուտ մնաց, և  
թերեւս մուտ պիտի մնայ մինչև  
վերջը :

Սակայն հակառակ լուսարան-  
ուելու կարօտ այս կէտին, Արժիւար  
ի տէրիշական, անշահախնդիր և  
նոյն իսկ կենցաղատեսց կեանքը  
աչքի առաջ բերելով, չեմ կարծեր  
ճշմարտութենէ հեռացած ըլլալ ը-  
սելով թէ մեծ հրապարակագրին ե-  
ղբրական վախճանին մէջ փնտուելու  
չէ ո՛չ կնոյ մատը, ո՛չ դրամին սէրը :  
Նա պարզապէս զոհ եղաւ այն յայտ-  
նութեանց, որոնցմով սա մի քանի  
տարիներու միջոցին, էլէրը լեցուց,  
թերեւս մի քիչ չափազանցութեամբ,  
իր տրամադրութեան տակ դրուած  
թերթի մը : Անշուշտ, անիկայ ա-  
մենամեծ իրաւունքն ունէր ազա-  
տարիւն բառը շահագործել ուզող  
խմբակները դիմակալերը ընելու,  
անոնց էնթրիկներուն և գաղտնիք-  
ներուն քաջատեղեակ ըլլալով : Ան-  
շուշտ, անոր նուիրական պարտակա-  
նութիւնն էր սուղուններէ, մական-  
բոյժներէ և գիշատիչ գաղտնիքէ  
մաքրելու ջանալ Յեղափոխութիւնը  
որուն հիմնադիրներէն մին ըլլալու  
անթաւա՞մ պատկը կը կրէր իր պատ-

կանալի գլխուն վրայ : Անշուշտ սիր-  
տը կը մեռնէր, հոգին կը մարմնէր  
տեանելով թէ՛ տակաւ առ տակաւ  
է՞նչպէս վարյալ բարքեր կտանար,  
հազարդիւնան ճիւղի մը կը փոխ-  
ուէր իր այն սիրտունն զաւակը, Յե-  
ղափոխութիւնը, որուն նուիրած էր  
իր ամբողջ կեանքը, որուն հոգեբուն  
տակ մարմինը կամարացած, մազե-  
րը ճերմկած էին . . . Թերեւս հիմայ  
միայն կը տեսնէր թէ իր այդ ձեռ-  
նասունին շատ երես տուած էր ըս-  
կիզքէն, բոլորովին առողջարար ըս-  
կըզուունքներ չէ՛ր քանդակած անոր  
գլխուն մէջ : Երբ տրուած ուղղու-  
թիւնը գալարուած օձի մը շրջանա-  
կէն էր, անշուշտ կը հասկնար ասոնք՝  
բայց մարդկային տկարութեամբ՝  
« ստիկայ սն չէ՛ » կը պոռար :

Եւ խելայեղօրէն կը կուտէր, կը  
պատեղաւորէր, գրեթէ կը մենամար-  
տէր ամբողջ բանակներու դէմ : Իր  
մահը հոգը չէր, միայն թէ ան ապ-  
րէր, անբիծ և փառահեղ . . . Բայց  
աւա՞ղ, թէ՛ ինք խոյլսողուեցաւ իր  
այլասերած զակին ձեռքով և թէ՛  
իր այդ դաւակը դատապարտուեցաւ  
ամենախայտառակ մահուան մը . . . :

Հարկ է որ այս բանը անջնշ-  
կիւրէն տպաւորուի մեր մտքին մէջ :  
Քանի մը օրէն, Գահիրէի բանտին  
մի անկիւնը պաշտօնապէս կախաղան  
պիտի հանուի, ո՛չ թէ այս կամ այն  
անհատը, այլ Հայկական Յեղափո-  
խութիւնը, իր այժմեայ ընթանումով  
և արարքով . . . Եթէ այս ահուկ  
իրականութիւնը մեզ չ'զգաստայնէ,  
ա՛լ դադրինք ինքնախարութենէ և՛  
իրքե շատոնց անշնչացած ու ներած  
գրեթէ մենք մեզ յանձնենք աշ-  
խարհիս յորձանքներուն, երթալ ան-  
յայտանալու համար երկրագունտիս  
պատմութեան անյատակ վիճերուն  
մէջ . . . :

Հայկական յեղափոխութեան  
գաղափարը յղացողներուն ամենէն  
մեծէն մինչև այսօրուան ամենայն-  
տին ինքնակոչ յեղափոխականը ա՛յն  
համոզումը ունեցան և իրենց գոր-  
ծերով ալ ցուցնել ուզեցին թէ իրենց  
ծրագիրը անբարեփոխելիօրէն ուղիղ  
էր և յարմար՝ աշխարհիս քաղաքա-  
կանութեան : Հետեւաբար յեղափո-  
խութեան մի որ և է կազմակերպու-  
թեան գործակերպին վրայ պաշ-  
տօնապէս ոչ - յեղափոխականի մը ա-

մենափոքր դիտողութիւնը իբր մատ-  
նութիւն նկատուեցաւ և այդ տեսակ  
անձերու թելադրանքը ո՛չ մի նկա-  
տաւորութեան չ'արժանացաւ : Գիտու-  
թիւն, ազգասիրութիւն միմիայն  
կազմակերպութեանց վրայ կեդրո-  
նացած էին . . . :

Այս յաւակնոտութեամբ և « մատ-  
նիչները » յանուն իրենց ազգասի-  
րութեան մէջ տեղէն վերցնելու ըս-  
կըզուունքով ճամբայ ելլող կազմա-  
կերպութեանց հետզհետէ վատթա-  
րանալը պէտք չէ որ մեզ զարմացնէ :  
Յեղափոխական, մարմիններու կող-  
մէն գործուած ամեն տեսակ ոճիր-  
ներ տրամաբանօրէն արդարանալի-  
ն են եթէ ընդունինք անոնց կարգա-  
խօսը : Ի՞նչ կ'ըսէ այդ կարգախօ-  
սը : Ահաւասիկ .

1. Թշնամի մեռցնելը հայրենա-  
սիրութիւն է :
  2. Մեր գործելակերպով միայն  
կարելի է հայրենիքը ազատել :
  3. Արդ թշնամի՛ է այն անձը՝  
որ մեզի գաղափարակից չէ :
  4. Ուրեմն հայրենասիրութիւն է  
սպաննել մեր սրարքը քննադատու-  
ները :
- Ճի՛շտ է այս պատճառաբա-  
նութիւնը : Ա՛յնքան ճիշտ, որքան  
ճիշտ է ճերմակին սեւութիւնը և այն  
քան անխախտ, որքան թղթէ դրզ-  
եակ մը : Բայց երբ ամենաբոլոր  
տարիներով այս գաղափարը քարոզ-  
ուի, առանց հակառակախօսի մը  
հանդիպելու, բնական է որ իր սր-  
գիտութեանը մէջ անկեպճ գլուխ-  
ներ հայրենասիրական դարձ կա-  
տարելու գօթիլի եւանդով, գնդակ-  
ներ արձակեն ալ ու ձայն . . . :

Անգամ մը խորհեցէ՛ք, « Հայ-  
րենասիրութիւն », փա՛ռք պատիւ,  
էմէլ յորիւն, անմահութիւն, » ի՛նչ  
զգլխիչ պատկեր : « Թի՛ք, թա՛ք մը,  
և հա՛ն մէկ հարուածով երկու թըռ-  
չուն կը զարնեն : ազգը թշնամիէ մը  
կ'աղատես, և դու կ'ստատուածա-  
նաս » : Ո՞ր տպէտ գլուխ, ո՞ր տկար  
խելագատակ չլլոնորը այս դեւթիչ  
թելադրանքներէն . . . :

Անբերպելի է որ Արժիւարի և  
ուրիշներու սպաննիչները կոյր գոր-  
ծիքներ եղան մի միայն : Բայց ո՞վ  
դարձնեց զանոնք : Անկեղծութիւն  
չէ՞ ըսել : Երկաթը՝ կուսակցամու-  
նեքէ, կոթը՝ մեզմէ :

Անշուշտ օրէնքը կը դատապարտէ այս  
տեսակ հայրենասէրները, բայց մենք  
կրնա՞ք այդ բանն ընել առանց  
խղճահարութեան :

Իրամ չ'տուողներուն և ոչ - գա-  
ղափարակիցներուն հետզհետէ և յա-  
րաճուն սպանութիւնները գէթ ար-  
տասահմանի ազատ հայութիւնը չը  
ցնցեց պէտք եղած կերպով : Ամե-  
նատարական ուղղափոխութիւնը  
մեզի պիտի թելադրէ՞ր՝ գոնէ իրենց  
զէնքը, գաղափարաճաւաղութիւնը,  
գործածել իրենց դէմ, բայց ինչո՞ւ  
չ'ըրնէք և չե՛ք ընէր : Ահա հարց մը  
որուն պատասխանը քիչ մը հեռու-  
ները պիտի տանի զիս : Այդ պատ-  
ճառու կը յետաձգեմ զայն : Առ այ-  
ժմը կը բաւականանամ ըսելով թէ՛  
մինչդեռ ազգասիրութիւն ծախող  
թերթերուն թիւը օրըստօրէ կաւել-  
նար շնորհիւ ազգին անգիտակ զա-  
ւակներուն նպաստին, անգին ամէն  
բանի իրազէլ անձնաւորութիւններ  
կարուկ միջոցներու ձեռնարկէն հե-  
ռու, մի քանի ցանցաւ և ազգին  
իրական շահը պաշտպանող, տգէտ-  
ները լուսաւորող հրատարակու-  
թեանց կեանքը գոնէ ապահովելու  
կը գոհամակէին : Գէթ այս տեսա-  
կետով, Արժիւարի մահը ամենէն ա-  
ւելի ողբացող բանաստեղծ - գրա-  
գէտներուն մէջ, արդեօք չկա՞յ հատ  
մը որ իր խղճին վրայ փուշեր զգայ . . . :

Լուսութիւնը, ո՛չ թէ արձամարհանք,  
այլ տկարութիւն, կամ հաւանու-  
թիւն և քաջալերութիւն կը թարգ-  
մանուի իսկամիտներու կողմէն :

Հիմայ կը հարցնեմ . ո՞վ սպան-  
նեց Արժիւարը : ո՞վ սպաննեց Թաւ-  
չանճեանը, Ժամհարեանը, Գարա-  
կէօղեանը և ըն և ըն . . . :

Հարկ չեմ տեսներ աւելի ծան-  
րանալու մեր այս տխուր կացութեան  
վրայ : Այս մասին ինչ որ կը խոր-  
հիմ ըսել հիմայ, արդէն թէ՛ իմ  
կողմէս և թէ շատերուն կողմէն  
տարիներէ ի վեր հազար անգամ յեղ-  
յեղուած է : Այսօրուան մաղթանքս  
այն է որ թէ՛ Արժիւարի սպանու-  
թիւնը և թէ՛ Գահիրէի դատարանին  
առջև, մեր յեղափոխութեան, իր  
ներկայ վիճակին մէջ դատապար-  
տուիլը՝ իբր նոր դարադրուի նկա-  
տելով, թարմ ուժերով նոր ուղղու-  
թիւն մը տանք մեր իբր ինքնու-  
րոյն Ազգ՝ գոյութեան հարցին :

Ա. ՊՈՒՆԱՆ

ԱՐՇԱԼՈՅ, Ի ՎԵՅԱՄՍԵԱՆ

Առաջիկայ (ն. ա.) Յուլիս 1ին «Արշալույս» ի Ութերորդ շրջանի Ա. ռաջին վեցամսեայն կ'աւարտի և կ'ըսկըսի երկրորդը՝ որուն մէջ փափաքելի է որ նոր արձանագրուող բաժանորդներու ստուար թիւ մը ունենանք :

Թէպէտև մեր կանոնաւոր յարատեւութիւնը գործնական և փայլուն ապացոյցներէն մին է թէ՛ մեր գծած ուղղութիւնը իր համակիրներն ունեցած և քաջաբերութեան արժանացած է, սակայն պէտք է խոստովանի որ՝ մեր զբոսը թիւներ ընել գիտնալն ալ մեր գլխաւոր սատարներէն մին եղած է :

Մենք հաստատուն համոզումը ունինք թէ՛ մեր ուղղութիւնը ընդհանրութեան օգտին հետ սերտ կերպով կապուած է. սակայն կա՛ն ազգայիններ ալ՝ որ ի հարկէ ստիպեալ շանք մը ունին ժխտելու այդ օգտակարութիւնը . . .

Մենք այդպիսի միամիտներուն վրայ նայելով արգահատելէ անդին ուրիշ զգացում չենք կրնար տածել :

Տակաւին շատ քիչեր կրցած են հասկնալ թէ՛ Արտասահմանի մէջ Անկախ Հայաստան մը ունենալ և պահելը ի՞նչ դժուարութիւններու կը կարօտի : Բայց մենք ապահով ենք որ շատ չ'անցած ամէն ոք պիտի հասկնայ անոր արժէքը : Ան այժմ մենք այդ համոզումով պիտի շարունակենք մեր զոհողութիւններն, սպասելով որ հետզհետէ ազգին ուղիւ միտ դասակարգը իր բարոյական և նիւթական օժանդակութիւնները բերէ մեզի, թեթևեցնելու համար հաւանական այն բոլոր խոչնդոսները, որոնք կուտակել պիտի ուզուին մեր քայլերուն առջև : Թէև մեզի վհատեցնելու հանգամանքէն զուրկ ըլլան այդ ամենը :

ԻՄԲ.

ՊԱՏՈՒՅԱՆԻՍ ԱՈՋԵԻ

Պատմանիս ըստուերին սակ Ի գիշերի գով յուսամած, Պիչ պիչ զիտեւ արծաթ յուսակ Իւր նըշուից հրնայուած :

Անպէ նուրք բոյլ մի յուսակ Մածկի յոյս ջանն իւր փառիմուն, Ձը ճեսնելով յուսնոյ յակ Կը ջրխորիւս ևս խիստ անհուն :

Դառնաւ զիտեւ յոյս կապոյս Երկնից ճակասն վիտիտուն, Պըջոդ աստիկն անկապոյս Պատկից էին փառսն անհուն :

Մերք առկայ ընդ փոքրիկուն Մագնն հոգոյս մէջ նըսն, Մածանկներով քնկրկուն Ճասապոյս մը յոյս վըսն :

—Մարդն ալ ասոյ մ'է յերկի Իւր յեղիցուն իսպիտով, Մերք փառսպակն կը քնկրի, Մերք կ'ստատուէ ողբալով :

Վ. ԲՐՈՒՏԵԱՆ

908 Յունիս 1 Աղիքանդրիս

ԾՈՒՎ ԱՂՁԻՍ

Այցերս պարած են ալ չեն շարիս. Բոլոր մարմինս քաղուած է յ'այիս Երեկ նայիմ. կ'ըսես հեկն հիւմի, Թոյ որ երթայ նոն անմեկի :

Նոր օր. հեզ տոյս Այեաց մեջ, Արարիկն գործը ո'հ. զո'ւ երեւջ, Գոգնս պեաց աղջկունք զհեզ, Ո'հ, գգունն մագերուդդեզ :

Վկայ յուսին քե չե նրակն, Հոյսիկն կեանքը պատրակն, Անաւոր վրեժ գոտան նախանն Ճանաչեմ. ո'չ կուրծքերին խանն :

Էր երբևէն վիժեիկն Սողոմոնի Թեւաւոր կուրծք' ինիւր զմեկի, Որոնք մուր անպէր արցունք յայիս Վիտս այցերուս խոնկիկն հոգիս :

ՇԱՀԷՆ

908 Մարտ 19

ՊԵՇԻԹԱՅԼԵԱՆ (1868 - 1908)

Ճիշտ քառսուն տարի առաջ սե հոգուն յանձնուեցաւ այս պատուական հանճարը : Եւ այսքան երկար տարիներէ յետոյ՝ իր պաշտելի յիշատակը դեռ թարմ կը վառի մեր սրտերուն մէջ :

Մէկն է ինքը՝ 1850 - 60 ական թուականներու եռանդուն, բեղմնաւոր գործընկերէն, որոնք իրա՛ն իրենց խոհմ, լուրջ, միանդամայն հզօր գործունէութեամբ յեղակարծօրէն բարեշրջեցին հայութիւնը, որ տգիտութեան թանձրամած խաւարին մէջ զայն թ գայթ կը խարխափէր դէպի անկումի փոսը :

Հայութեան ընդօստ զարթնում մը, և անբացատրելի արագութեամբ յառաջդիմումը՝ մարդս իրա՛ւ զարմացողին հիացում մը համակէ, երբ մանաւանդ անգրագառնայ այն ժամանակուան մտաւորականներու աշխոյժ և իմաստալից գործունէութիւնը :

Ա՛հ, այդ անմոռանալի թուականը, որ հայութեան երկրորդ Ոսկեդարը եղաւ :

40 ական թուականներու հայ զարգացեալներու անդրանիկ սերունդը երբ կը դառնար Փարիզէն դէպի Պոլիս, շատ ողբալի և յուսահատ կը գտնէր իրեն ազգակիցներուն դրութիւնը, կօնքուռներու Հիւկօններու, ազատավառ բոցաշունջ գրականութեան ողին, ցայտուն, վսեմութիւն զաղափարներ ցոլացուցած էր իրենց ձգտումներուն մէջ : Հայութեան ողբալի ներկան յեղաշրջելու բարեբեւութեամբ ատենին իսկ, ահա հանճարներու երկրորդ խումբ մը կը դառնար Փատաւիայէն, Իտալեան պայծառ երկրներին տակ լուսաւորուած : Պէշիթաշլեան, Հեքիմեան, Մամուրեան, և ուրիշներ : Եւ այս ամեն կարող գործիչներու համախմբուելը՝ շուտով ճանչցուց ժողովրդին տգիտութեան աղէտները, և յառաջդիմութեան քաղցրութիւնը :

Բարեբաղդ զուգընթացութեամբ կարծես՝ Ռուսահայն ալ իր մէջ զարթնումի և զարգացման կայծեր կարճակէր : Պատկանեան, Նալբանդ-

եան, Նազարեան, ամենքն ալ երիտասարդ ուժեր, Գերմանական կրթութեամբ տոգորուն : Ռուսահայուն վերածնութեան իմաստուն Ռահվիրաները եղան առոնք :

Ան ատենները, մանաւանդ 1862 ին հոյ լրողական հրատարակը 60 է աւելի թերթերու առատութեամբ ճոխացած էր, որոց մէջ քաղցրախոս թուչունի նման իր թերթը կը հնչեցնէր «Կիթաբը» անդրանիկ իգական թերթը, խմբագրութեամբ Օրիորդ Հայկուհիի :

Կալիթա չորս թերթ ունէր, Բիթէրպուրի 3 նոյնքան ալ Բարիզ իսկ մնացեալները կը հրատարակէին Պոլիս, Նիկոմիդիա, Չիլուանիս, մանաւանդ այս վերջինը, 5 - 6 թերթեր հրատարակելէ զատ, հրատարակած է նաև 150 կտորէ աւելի գրքեր, որոնք հայկական մատենադարանի ամենէն գլխաւոր զարդերը կը կազմեն : Գրականութեան տեսակէտով հիմայ Չիլուանիս կարելի չէ բազմաթիւ անցելոյն հետ, այնպէս որ դիւրին է հաստատել թէ՛ իր հին ողբերգութեան շատ բան կորսնցուցած է :

Պէշիթաշլեան իր ատենուան մտաւորականներուն մէջ ամենէն ցայտուն և համալիրելի դէմքը կը ներկայանայ : Ո՛րքան մեծ բանաստեղծ մը՝ այնքան ալ կորովի և հումայնացունց գործիչ մը եղած է, ճարտասան հռետոր մը և անվրէպ կազմակերպիչ մը՝ հեղահամբոյր և փափկասիրտ :

Անկիկայ մինչև մահը մաքառած կուռած է Հասունեան զըրեւի ազգազա գործունէութեան դէմ : Հասունը՝ որ 40 տարի շարունակ հայութեան արիւնը քամեց : Պէշիթաշլեանի ատենութիւնը ա՛յնքան սաստիկ եղած է Հասունի դէմ, որ անոր պատկերը եկեղեցւոյ պատէն քաշելով ջախջախած է ոտքերուն տակ :

Պէշիթաշլեան եղած է նաև հայ թատրոնի հիմնադիրներէն մին և կըսուի թէ՛ հայ բեմը կարող եղած է մրցիլ Եւրոպականին հետ : Հոս չենք կրնար մոռնար մեծահամբաւ Երաժշտագէտը Չուխանեան՝ որ կարևոր աղբակներէն մին եղած է հայ բեմին, բայց թշուառութեան մէջ մեռած է . . .

Չուխանեանի գործերէն կարելի է յիշատակել իտալերէն Արշակ Բ. ը (argeso secondo) Օմբրան որ պիտի ներկայացուէր իտալական համբաւաւոր խումբի մը կողմանէ, եթէ Բերայի մեծ հրդեհը չը ճարակէր Նաւուի մեծ թատրոնը :

Պէշիթաշլեան իր բանաստեղծ չէ՛ արտադրած մեծածաւալ հատորներ, սակայն իր քերթուածները անհունօրէն բարձր են և քաղցրանուագ, նրբահիւս, համեմուած զՄԱՅԻՍ սրտասարսուռ սճով : Իր աշխարհաբառ ամենապարզ ոտանաւորներն անգամ, շնորհալի հմայք մը ունին :

Աւա՛ղ. այսօր հայութիւնը գըրեթէ որբացած է այդպիսի մաքուր և վսեմ հոգիներէ, կործանած է

հայ թատրոնը : Չուխանեանի, Երանեանի նման գերազայուն երաժիշտներ չունինք այժմ, որոնք այնքան քնքուշօրէն թերթացուցին հայ սրտերը, և մինչև այսօր անոնց երգերէն են որ մեր հոգիները կը յուզեն տրամանոյշ :

Անհետացող մեր մեծ բանաստեղծին գործունէութեանը և իր ժամանակուան կարևոր դէպքերը պարունակող «Վերջերս Պ. Ա. Չուխանեանի հրատարակած «Պէշիթաշլեանի կեանքն ու գործը» անուն հատորը կարժէ ունենալ և կարգալ, հոն ընթերցողը պիտի գտնէ անոր ընտիր և քնքուշ բանաստեղծութեանէն կարևոր մասեր, Պ. Չուխանեանի սահուն և յաղոյ գրչովը ամփոփուած :

ՍԷԹ ԳԱԼԷՄՃԵԱՆ

Պ Ա Տ Ա Ս Ի Ա Ն Մ Ը Պ . Բ . Շ Ա Հ Պ Ա Ձ Ի Ն

Կան մարդիկ որ իրենց թմբուկին արտադրած շոնթը խորթաւոր մեղեգի մը կարծելով հիացումի ինքնամոռացութեամբ և անգիտակի իրենց շուրջը անցած դարձածին, կը շարունակեն, կը շարունակեն մինչև որ վերջապէս ունկնդիրները ձանձրոյթով համակուած կ'որոշեն այդ միօրինակ ու խլացուցիչ նուագին վերջ մը տալ :

Պ. Շահպազ այդ ծայրայեղ դատակարար կը պատկանի : Ատի՛թը ունեցած եմ կարգաւոր իր մէկ քանի գրուածքներու և այս անգամ ալ կարգադի «Մարակ» ի երկրորդ թիւին մէջ «Կարելին» խորագրով իր առաջնորդող մէկ յօդուածը, որ սկսուած ներսէս վարժապետեանի ներքողականովը կը յանգի ընկերվարականութեան յայտնի propagande ին :

Ներսէս վարժապետեանի մասին գրած մեզ քնաւ չը գործադիր, որովհետև ամբողջ հայութիւնը գիտէ որ մեծ մարդ մըն էր ան՝ որ իր ցեղին գոյութեան կոիւր մեծ ու ազնիւ ժէսթով մը սկսաւ և վարեց մինչև իր մահը : Բայց մեզ հիասթափեցնողն է այն անտարամբանական յամառութիւնը, որով բացարձակապէս կ'ուզուի իր վըրտանդուած գոյութիւնը քաշկոտելու հազիւ կարող՝ ամեն կողմէ լքուած, պաշարուած թշուառ ժողովուրդի մը ընկերվարականութիւնը քարոզել, որպէս զի ատով ա՛լ աւելի դիւրանայ անոր բնաջնջումը, ի մի ձուլումը այնպէս չէ՛ . . .

Ո՛չ, այլեւս գաղափարի շամանթաղըն անգամ չը մնար անոր մէջ, ան կ'ըլլայ անդրալեռնական միջնադարեան մոլեռանդութիւն մը տարբեր ձեւի տակ և տարբեր կերպով քարոզուած :

Ատենէ մը ի վեր կը դիտուի որ կարգ մը գրողներու համար որոնցմէ է նաև Պ. Շահպազ. նորութիւն մըն է դարձած ընկերվարականութիւնը եւ ատոնք հայ ցաւերու վրայ խօսած ատեններն կարծես արժանապատուութեան վիճարարում մը կ'զգան զուտ ազգայնական հովեր անոնց և կ'սկսին հայէն անհամեմատ կերպով աւելի երջանիկ ժողովուրդներու պղտիկ հոգիները դբաղիլ : Եւ վայ անոնց որ իրենց համակարծիք չ'ըլլալու աններելի յանցանքը կը գործեն. անոնք պարզապէս ապիկար տգէտ ողորմելիներ են :

Ընկերվարականութեան քաղաքակրթիչ հակայ դերին առջև շատոնց ի վեր գլուխ ձոսծ գաղափարապաշտ մը ըլլալովս հանդերձ, տարիներէ ի վեր եւ մանաւանդ սա պահուս հայ ցեղին կրած արհաւիրքով շաղախուած խոշտանգուած մը եւ անոր գլխուն վրայ տամոկեան





կանգ կ'առնեն նրա յողածի րան երկու երեք պարբերութեանց վրայ, որոնք կապ ունին ինձ հետ կամ որպէս անձնաւորութեան եւ կամ որպէս ֆոնդի րանսի :

Պարտնը զարմացած է որ Ալէքսանդրիայում տեղի է ունեցել համարձակ կազմաւորութեամբ Պողոսեանի, ի նկատս Պողոսեանի :

Այս վարմունքը որոշ տրամաբանութեան արդիւնք է :

Եւ չը նայած որ յողածագիրը այս կէտի վերաբերմամբ իւր պատճառաբանութիւնը չէ ամփոփել, այնուամենայնիւ նա զայիս է այն եզրակացութեան, որ այդ գոնէքի տեղի ունեցած լինելը զատապարտելի է : - Ինչո՞ւ : - Որովհետեւ քոնսէլը եղել է Պողոսեանի զեկաւարտութեամբ ի նկատս նոյն Պողոսեանի :

Ահա ամբողջ պատճառաբանութիւնը : Մեզանից իւրաքանչիւրը բախտ է ունենում հանդիպելու, առօրեայ կեանքի մէջ, այս սեռակի տրամաբանութիւն սակայն տեսնել նոյն տրամաբանութիւնը լրագրութեան մէջ ի յոյս զրուած - անուուաղն տարօրինակ է :

Եթէ հետեւեալ լինինք այդ կերպի տրամաբանութեան, մենք անկասկած կը յանդիմանայինք (պարզապէս բղիտ) եղբայրացութեան, որ աշխարհիս վրայ եւ ոչ մի երաժիշտ իրաւունք ունի քոնսէլ տալ բացի այն զէպքից, եթէ քոնսէլ արդիւնքը յատկացած է այս կամ այն « անհատին » բայց անպայման ի նկատս ուրիշի :

Դաւով այս եզրակացութեան, Պ. Արամին եւ իր նման մտածող - դատողներին մնում է միայն եւ միայն բողոքել այն բոլոր քոնսէլներին եւ ներկայացուցիչներին դէմ, որոնք վերոյիշեալ ձեւով չեն ձեռնարկում բարեգործական նպատակներին :

Երկար կանգ չեմ առնելու այն կէտերի վրայ, ուր իրական փաստերը « գիտակցորէն » կամ « կուրորէն » յեղաթիւրւած են. սակայն ստիպւած եմ նկատել տալ, թէ աւելի քան զարմանալի է որ « 60 ի չափ երգող երկսեռ երիտասարդները » որոնց մէջ բաց ի զայնակցականներին կային նաեւ հընչակեան կուսակցութեան պատկանողներ, ինչպէս եւ չէզոքներ, չունեցան իրենց մէջ եւ ոչ մի անհատ, որը « հետաքրքրէր իր վրայ ծանրացող ներառական պարտականութեանը » կամ « հասկնար նպատակը » որպէսզի իրեն զէպի բեմ չը քաշէր Դաւանակցութեան Ենթակոմիտէի եւ կամ չընդունէ մէկը որ « զգոհէր » : (Ինչի՞ց) :

Այս « յառաջաբանական » տրամաբանութիւնից յետոյ, Պարտնը անցնում է իրականութեան եւ յայտարարում թէ քոնսէլին մասնակցողները « իրր շահու աղբիւր են գործածւած » :

Եթէ Պարտնի դատողութիւնը թեւադրում է նրան յանդիմանել այսպիսի եզրակացութեան, հապա ուրեմն նա պէտք է եզրակացնէ նաեւ այն, որ քոնսէլին ներկայ գտնւած հասարակութիւնը նոյնպէս ենթակայ է եղել նոյն բային, որովհետեւ հասարակութեան ներկայութիւնն է բերած այն զրամը, որ վճարեց թատրոնական սրահի, զանազակ եւ մի շարք ուրիշ ծախքերի համար : Նա շահագործում է հոգեկրում այն որ Պողոսեանը քոնսէլի աւելի սխրողներին եւ ոչ պրոֆեսիոնալ երդողներին մասնակցութեամբ, իսկ ավակցողներին՝ շահագործման կողմնակիցներ անւանում. (պիսկիւր. շահագործում, դատակարարային կոիւ եւ ի վերջոյ Պ. Արամի

(\*) Ծ. Խ. - պատշաճութեան սահմաններուն մէջ վիճարանելը ոչ միայն լոյս կը ցայտեցնէ, այլ եւ զայնթակզելի մտքերը կը հանդարտեցնէ :

կողմից պրոպագանդ « ի նպատ » շահագործող կողմի. լաւ նկատեցէք, ոչ ի նպատ իւր, այլ ի նպատ ուրիշի.) բայց զրանով արդեօք առիթ չէ՞ տալիս ու եւ մէկին համոզուելու, թէ ինքը « շահագործում » տէրմինի մասին զատաբար իսկ չունի :

Նա խօսում է 20 առ 0) ի մասին, որ « Դաւանակցութիւնը պիտի ստանար զոյացած հասոյթէն » :

Ընթերցողը այն տպաւորութիւնն է ստանում, որ իւր թէ Պողոսեանը հետեւել առաջարկը արած լինէր Ալէքսանդրիոյ Ենթակոմիտէին, - պարտնայք գտէք ինձ համար երգողներ եւ ընդհանրապէս ավակցողներ, իսկ ես զրա փոխարէն ձեզ կը վարձատրեմ 20 0) յատկացնելով Հ. Յ. Դաւանակցութեան, եւ կամ հակառակը, ենթակոմիտէին առաջարկած լինէր Պողոսեանին. ուէք մեզ Ձեր հասոյթից 20 0) եւ մենք զրա փոխարէն ձեզ կը շահի երգողներ եւ ընդհանրապէս ավակցողներ :

Որ 0) ի հարց է եղել, այդ իրողութիւնը ոչ ոք չէ ժխտել եւ չի էլ ժխտելու, բայց որ այդ հարցը տարբեր է եղած, նոյնպէս պէտք է ժխտել : Պարտնը իւր յողածը կամ « Դոն ֆիլոսոֆիան » տրամադրութեամբ է կազմել եւ կամ անուուաղն սրճարանային « առէ - կող » ներքի վրայ հիմնուած :

Իրողութիւնը հետեւեալն է : Երբ ես խորհրդակցութիւն եմ ունեցել ինձ ավակցողներին հետ, կարծիք յայտնեց, թէ յարմար չի լինի արդեօք քոնսէլի կազմակերպելը թողնել տեղիս զաւանակցութեան մարմինն եւ ինձ հրաւիրել լոկ որպէս երաժշտական մաս պատրաստող, որոշ վարձատրութեամբ, ինչպէս այդ եղել է Դահլիճում : Ինչ - ինչ նկատուածներով զաւանակցութեան մարմինը չընդունեց այդ կարծիքը, եւ Դաւանակցականները ( ոչ թէ զաւանակցութեան մարմինը ) պատրաստակամութիւնն յայտնեցին ավակցել զօնսէլին :

Ես յայտնեցի շնորհակալութիւնս եւ ի միջի այլոց աւելացրի որ եթէ քոնսէլը ներթականի կողմից յաջող ելք ունենայ, ես իմ կողմից կը ներբեմ 25 0) Հ. Յ. Դաւանակցութեան. լոկ համակրական զգացումից զրգւած : Ներկայ եղողներին մէկը նկատեց, որ 0) որոշելը անյարմար է եւ որ նւէրը կընդունել զաւանակցութեան կողմից ինչ 0) էլ կազմելու լինի նա, այն զէպքում, եթէ քոնսէլի հասոյթը կազմուելու լինի մի պատկանելի գումար : Տոկոսի պատմութիւնը այս է : Եթէ ընդունինք Պ. Արամի ասածները որպէս ճշմարտութիւն, մենք պէտք է անխուսափելիօրէն յայտնեք այն եզրակացութեան, թէ Դաւանակցականները ( ըստ իրողութեան ) կամ Դաւանակցողները ( ըստ Պ. յողածագրի ) չէ կարողացել ոչ միայն սպասել սոմսերը, այլ եւ ծախել այն չափով ինք, որ ի վերջոյ Պողոսեանը իւր տւած եւ Դաւանակցողներէն հոգեւորութիւնը վաճարող քոնսէլից երեք Եղբայրական ոսկի մնաս է կրում :

Արդեօք ինչով բացատրել այս երեւոյթը : Ձէ որ Դաւանակցութիւնը 25 0) պիտի ստանար զուտ հասոյթէն. չէ՞ որ նա իւր « կողմին պատկանող տղաքները մեքօ - զոնիով բեմ է քաշել » ուրեմն կարող էր նոյն մէթօզի դիմել նաեւ սոմսակներին վաճառման հարցը լուծելու համար :

Սակայն եթէ Պարտնը կամենայ այդ հակասական երեւոյթը բացատրել նրանով որ ինք իւր արբանեակներով միասին բարեհաճած է հակառակ պրոպագանդ մղել ( եւ ոչ մի տարբերութիւն զնկող միջոցներ մէջ, նոյնիսկ այն աստիճանի, կարծես պատկանէր կրուչեանի կուսակցութեան ), այնուամենայնիւ նախապես ինքն ինքն է հա-

կատուութիւն ի նկատի առնելով լոկ այն հանգամանքը, որ զաւանակցութեան օտարի կամ զէպքում ոչ միայն չէ եղած զրամական զէֆիցիտ, այլ եւ ծախւած է 60 - 70 ոսկու, եւ նոյնիսկ աւելի խոշոր գումարի տոմս, ( այդ պէտք է Պ. Արամը աւելի լաւ գիտենայ քան ես ) չը նայած որ զաւանակցութեան բոլոր հակառակորդները, առնուազն հարիւր Պ. Արամի գին ունեցողներ, ոչ նազ ետանք եւ գործադրում այսպիսի զէպքերում :

Գաւով յողածագրի այն յիմնի վերաբերութեան, որից զրգւած նա բերեալ է հոգալ իմ ներթական բարորութեան մասին, ինձ մնում միայն յայտնել նրան հրապարակով իմ խորին շնորհակալութիւնս, նկատել տալով միաժամանակ նորիս գրաստութեան, որ ես ամենեւին կարիք չեմ զգում « միջնորդներին » պաշտօն մը գտնալու համար. ( մասնագիտութեան վերաբերել պաշտօնն է քոնսէլներ տալ ), իսկ մասնակի որոշ ապրուստի միջոց մը գտնել - ու համար, անպայման կը զիմեմ Պ. Արամին, որ սրճարանային բարոյականութիւն է ունեցել զերազատել մուրացկանութիւնը քոնսէլ տալուց, որպէսզի նա ինձ առաջնորդէ « Աղբատախանումին » դիմելու :

Ձեմ կասկածում որ վերոյիշեալ բարեգործական հիմնարկութեան հասցէն նա լաւ պէտք է իմանայ :

Այս ամենից յետոյ մի հարց Պարտն յողածագրիին :

« Բայց միեւնոյն ատեն չեմք կրնար համոզուել թէ զաւանակցութիւնը շահատակութեան սպարէզ մըն է եւ հոն մտնողները իրաւունք ունին իրենց յոռի գաղտփարները եւ անձնական ձգտումները առաջ քաշուել » . այս պարբերութիւնը արդեօք ունի է վերաբերում. ինձ, թէ ինձ ավակցող - շահագործման կողմնակից ենթակոմիտէի անդամներին :

Կը ցաւիմ, որ « սրան կամ նրան մեքօ - զոնիով քոնսէլին մասնակցիլ ըստիպողներին » զէմ բողոքողը, ինքն է մեքօ - զոնիով ստիպում այս կամ այն մարդուն խօսել. ներկայ զէպքում ինձ : Բոնիտրանս ԼԵԻՆ ՊՕԴՈՍԵԱՆ

14 Յունիս 1908 Ալէքսանդրիա

ՍԵՂԱՆՍՈՐԱԿԱՆ ՏՈՒՆ

Մուսի փողոց թիւ 6, Սիմկրի մասնա-

ճիւղին ֆով, Ժիւսքիի դիւնաց :

Կը գնէ եւ կը ծախէ հրապարակի վրայ շրջաբերող բոլոր կարեւոր արժեթղթերը, մասնաւորաբար Գրէտի Ֆոնսիէի հին եւ նոր, Բուժէլի երկաթուղեաց եւ Բանամայի Ֆրանսական վաւարացնալ արժեթղթերը, որոնց սկզբնց՝ այսօր շահող թիւերուն ցուցակներն ալ ունի :

Արժեթղթերու արդի խիտ նպաստաւոր գններէն կրնան օգտուել Եղբայրական մեր ազգայինները մեզի դիմելով :


Մասնավճարներով - 25 50, 100 - կարելի է արժեթղթերու արժանաւ, եւ մատչելի պայմաններով՝ աւանդի փոխարէն՝ փոխառութիւններ կնքել :

Սեղանաւորական ամեն տեսակ գործառնութեանց, եւ ստեւտրական ամեն կարգի Պոնոնի գեղջելու պատրաստակամութիւն :

Սեղանաւորական եւ Պորսայի գործառնութիւններ եւ ա՛յ կարգի գործերու վերաբերելու գաւառներէն եղած յանձնարարութիւններ փութով կը կատարուին :

Բուժէլի երկաթուղու վիճակահանութեանց պանդ Օթմանէն երաշխաւորելու եւ վաւարացնալ քրօնիսիսիսի գնել ուղղողներուն համար՝ լաւ պատեհողութիւն մ'է մեզի դիմելը, որովհետեւ պանդ Օթմանէն ուղղակի կատանանք յիշեալ քրօնիսիսիսի : 12-50 ԱՐՄԵՆԱԿ ԹԱՇՃԵԱՆ

ԹՈՒՐԻՍՏ ՍՏՕՐ (TOURISTS' STORES) Երազար բաշա փողոց՝ Խիլիսայ Օրիսիսի դիւնաց



Վերսէթ "Crossett" Ամերիկայի լաւագոյն գործարանն է. զիմացուելու հանդիսա կօշիկներու. որոյ Եղբայրական միակ ներկայացուցիչն է ԹՈՒՐԻՍՏ ՍՏՕՐ, 19-43 ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶՍՓԱՒՈՐ

ԽՕՍՈՒԸՌՏՈՒՔ

ԳՐՈՒՆԿ ՇՍՏ ՊՍՏԻԿ

- Ա. - Ի՞նչ է Ֆեմինիզմը.
Բ. - Ֆրանսերէն բառ մը որ մօտեւորաւ Հայկական առձեռն բառարանին նոր սպաղորութեան մէջ պիտի արձանագրենք
Ա. - Այդ բառին հայերէնը չկ'այ :
Բ. - Դժբաղդարար ո՛չ : Ոմանք «կանանց ազատութիւն» ըսին, բայց վերջը հաստատելով որ կնիկները իրենց ազատութիւնը ի զէպ եւ յանդէպ ժամու շաբաթ կը գործածեն, այդ բառը մտաւցումի տուին. հիմա անոր աւելը Ֆեմինիզմը պիտի բռնէ . . .
Ա. - Վախի որ ատոր հայերէնը չը կայ որ մենք ալ հասկնանք, աղէկ չէ՞ որ այդ անուններով մեր մէջ մտած նորոյթներն ալ անոնց հեղինակներուն եւ պաշտպաններուն հետ ստատանային գիրկը զրկենք . . .
Բ. - Ձէ, չէ՛, այդչափ անգութ մի՛ ըլլար Ֆեմինիզմը՝ տուր մնացած եւ կը շարունակեիր անագին միեթարանք մըն է. իսկ երկուսն մեծաբարքան անբարոյականներուն ալ անմասնակեայ երեսի ծածկող այդ երեսի ծածկողները Ֆեմինիզմով այդ երեսի ծածկողները քաշկուսուին ու պատուին եւ անոր աւելը քիչ մը ուրիշ բանով շնորհագրուին, ատոնց դպրուստ չէ :
Ա. - Բայց Ֆեմինիզմը . . . պոստ-վոկատօ՞ւր . ( provocateur - գրգռիչ ) ակիտատօ՞ւր ( agitateur խռովարար ) ի՞նչ պիտի ըլլան եւ ի՞նչ տարբերութիւն ունին :
Բ. Ասոնց մէջ շատ մեծ տարբերու-

# ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻԱԽՈՏԻ

## ԵՒ ԸՆՏԻՐ ՄԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿՂ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕՁՊԷՔԻՅԷ

Արեւելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի ածան դներով ունենալու կամ վայելիլու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ ածելի պէտք է նախընտրել մեր վաճառատները :

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարներու լաւագոյն զանազանութիւնները դանելու համար հարկ չ'կայ հոս ու հոն ժամաւաճառ ըլլալու . բաւական է առնալ մը անպատճառ այցելել մեր վաճառատները :

Պարկական ամենաընտիր թէմպէքի ալ և այլ տեսակները բայց մեր վաճառատներէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալ է :

Մեր վաճառատները վերջապէս, զինքնու ածանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մասնաւորապէս գործածեցորոյցած ապրանքներուն թարմութեամբ անմրցելի է, որուն անժխտելի ապացոյցներէն մին ալ կարգացած եւրոպացիներէ օրըստօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են :



### ՄԵՓԱԿԱՆԱՏԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԲ

ՅԱՏԿԱՆԻՇԸ ԻՐԵՆՅ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է .

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԲ

Թիւններ կան Պրովոկատիոն Եւ ակիսատոր ռուսահայերու բերին միջհայացած են. իսկ Ֆեմիլիզը, այդ հետաւրի, զգուշանոյց, պարանական եւ պարմանտկան բառը՝ ֆրանսերէնէ նոր պիտի հայանայ, իրեն հետ շատ անգին նուէրներ բերելով մեզի . . . Սակէ գատ, արդէն Ռուսահայերուն մէջ պրովոկատոր և ակիսատոր իրենց առատ ներկայացուցիչներուն պատիւ մը եղած ըլլալու համար հայացած և գործածական դարձած են. իսկ Ֆեմիլիզը կէս դարէ աւելի ժամանակի մը մէջ հազիւ քանի մը ներկայացուցիչներ տուած է. ա՛յնչպի որ մատի վրայ կրնան համբուլ . . . ամբողջ աշխարհի չորս անկիւններուն մէջ . . .

#### ՄԷՐՍԷՏԷՍ

#### ՆԱՄԱԿԸ

Չեմ գիտեր ամսոյս քանիին էր. նամակ մը ընդունեցայ թերթիս բարեկամներէն մէկուն կողմէ, որ տառնց ժամանակ կորսնցնելու իրեն այցելելու կիմացնէր. և ոտքով վաղեցի (սխալ չը ըմբռնէք՝ ըսել կուզեմ թէ աճապարեցի) շուտ իմանալու համար թէ ի՞նչ կրնայ ըլլալ այս ստիպողական հրատարակուած ձառն Վաղեցի քան թէ քաղցի, առանց ուշադրութիւն կարճնելու ստիպ (ո՛չ թէ ոտքերուս, որովհետեւ մէկ ու կէս ոտք միայն ունիմ) հանդիպող քարերուն եւ պարագ կազի թեմիկներուն՝ որք կը յանդգնէին զիս գետին տապալելու ձամբան գիտ տեսողները կամ խենթ կարծած են եւ կամ մաքնիստացնող Բիքմանէն թելագրուած, հո՛գս . . .

Վերջապէս հասայ այն իրանելի վայրը՝ ուր պիտի կարենայի իրագործող հետաքրքրութեանս՝ եթէ, ժամանակը անցած չըլլար. Ափսո՛ս է, ի՞նչ կրնամ ընել, պէտք էր այդ գիշերը լուսնար, բայց ի՞նչպէս. ո՞վ կրնայ ընանալ թէպէտեւ տուն եկայ, հանուեցայ, մտայ անկողին բայց կրնաս նէ քնացիր, մէկ կողմէն միւսը կը դառնամ, կը նըստիմ, կը պահիմ, ինչ կընեմ քունս չի տանիր, սկսայ հնարք մտածել, էլ այլ լաթի մը կտոր գտայ աչքերս կապեցի, դարձեալ չեղաւ. բոլոր ստոնց պտտուածը հետաքրքրութիւնս է հա՛, շատ զէշ բան է չափազանց հետաքրքրելու ըլլալու ինչ որ է, անկողնէն դուրս ելայ, լոյսը վառեցի սեղանին վրայ գիրք մը փրկուողներէ որ գոնէ կարդալով լուսնեմ, ձեռքս անցաւ թերթ մը ու սկսայ կարդալ, երկու երեսները կարդալէս վերջ դարձուցի երբորք երեսը, տեսայ թատերական վերնագրի տակ յօդուած մը. կարդալու սկսելս կը յիշեմ, բայց վերջացնելս ո՛չ, որովհետեւ քունս տարած էր . . .

Հազիւ մէկ ժամու չափ կրցայ քը-

նանալ. Այդ գիշեր միւսկները ժողով ունին եղեր, ու հրաւիրեր են նաեւ՝ լուսնըն ու միւսները, եւ իրենց ժողովատեղին ալ ընտրել են իմ անկողինս. իսկ խորհրդակցութեան սկսելու համար սպասած են քնանալուս :

Ստոնք իրենց ժողովէն վերջ՝ անշուշտ անօթեցած ըլլալու են. երբ արթնցայ տեսայ որ ճաշի նստած էին, մարմնոյս վրայ՝ ամենքը իրենց ընտրած կողմէն համտեսելով, իսկ միւսները՝ ըսկըսած էին արդէն ինձի սաղը օդին մէջ. լուսնըն ալ՝ գերմանիկ վայր կը պարէին ձերմակ սաւանիս վրայ, ստիպուեցայ անկողինս յանձնել ինքնակոչ հիւրերուս ու դուրս ելնել ձեռքերնուն ազատելու համար. Անկարելի էր ալ անկողին մըտնել. բարձ մը առնելով գացի բազմոցիս վրայ երկայն նստեցայ, սոթ թերթը՝ դարձեալ սկսայ կարդալ, բայց ի գուր, այս անգամ իւր առջի ազգեցորդները կորսնցուցած էր. Ուշի ուշով սկսայ կարդալ, տեսայ որ՝ այդ գրուածքը թատերական գրութիւն (ոչ քննադատութիւն) մը ըլլալէ աւելի հակառակութիւն կը հոտէր. ալ աւելի ծիծաղս չարժեց սա մասը որ՝ «դերասանները ինքնութիւնին պահելու համար, պէտք զգացեր են վայրագ ու աղմկալի անուներ տանել» մինչդեռ յօդուածագիրը ինքնութիւնը չէ՛ր պահած երկնքի՝ ամենէն աւելի միմեկը շուտ տաքող աստղերէն մէկուն անունով. (պա՛մա fkor s'իկն, fիկնի պի՛ր պա՛skal կիտղի օրսա) կը ըստճական առածը :

Յօդուածագրէն պիտի խնդրէի որ ուրիշ առթիւ՝ եթէ պէտք զգար թատերական վերնագրին տակ բան մը գրել, հակառակութեան գաղափարը մտքէն անգամ չանցնէր, որպէսզի ան ու առ—սա մարդը թատրոնէ չի հասկնար եղեր—չըսեն, որովհետեւ ելեր անանկ մէկուն գողմտ կարողացեր էր՝ որուն չարժուածները ու սկանջ իւրացնող պոռչուքը բողբոլին անյարմար էր իւր ստանձնած դերին, միւշչեղ ուրիշներ աւելի լաւ կատարեցին. ինչպէս թորոս Լեւոնիի դերը կատարող պատանին, նոյնպէս դերը ցանկին, քահանան, և այլն :

Գովեստի արժանի էր նաեւ օրերորդներու այս ձեռնարկը որ կրցան՝ եզակի փայլուն ու հաճելի ժամանց մը պատճառել թատերասէր հասարակութեան երանի այն ձեռնորդներուն որ հանրութեան օգտակար զաւակներու ծնունդ տուած են եւ կը թոյլատրեն անոնց որ՝ ընկերութիւններ կազմելով՝ ազգիս օգտակար գաղտնալու աշխատին . . .

Թերթը կարողացած ատենս այս ու այս օրինակ մասնումներով պաշարուած էր միտքս. մէկէն զմեկս վեր առի տեսայ առաւօտ է եղեր, սկսայ հագուել ու տունէն դուրս նետուիլ. որ ամենքը քառորդ մը չի տեսնուց. Գացի հասայ հոն, դուրս դեռ զոյց է . . . Պէտք է սպասել սպասեցի թՈՓՍՆ ԵՒՅԹԱՆ

## ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԻՆԿԷՐ


Պալատի վողոց . Խաղնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ դիմաց Գաֆէ Տը Լա Պուրսի կից

Հին եւ Նոր ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի միքենտները Սինկլիներն են և ստոնցմէ մինչեւ ցարդ 17,000,000 ծախուած է :

400 և աւելի վիսյակսն եւ մեքայներով վարձատրուած, Երաշխատեալ մեքանակներ.

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ  
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ  
Փարիզի 1900 ի Տիեզերական արտեսանակախիսին մէջ ստացած է .  
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՈՅ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ  
ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ ԵՒ ԹԱԳԱՌՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՅ  
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Բ. ՆՏԻՊԱԿԱՆ ՏԱՆ



Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ Սինկլի յաճկանը ինչ

Գին ՉԱՓԱՒՈՐ

Ձրի դասեր և նորոգութիւններ, Սինկլի մեքենայից համար, յաճախողատուներուն մէջ :

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հիշերու և նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

#### « ԱՆԱՀԻՏ » Ի ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

« Անահիտ » ի եղիպտոսի գործակալ նշանակուած է Պ. Արմենակ Ատիլեան՝ թէ 907 ի և թէ ներկայ տարուայ բաժնեգրիներու վճարման համար պէտք է դիմել իրեն :

Գործակալութեան հասցէն է՝  
Arménag Adilian  
c/o Davies Bryan & Co.  
Sh. Moghraby Cairo

#### ՆՊԱՐԱՎԱՃԱՌ

ՇԱՐԷ ՄՈՒՀԱՄԷՏ ԱԼԻ, ՊԱՊ-ԷԼ-ԽԱԼԲ

Շարէ Մուհամէտ Ալիի ամբողջ զբոսն վրայ եղող նպարավաճառներուն մէջ, մեր վաճառատներին միակն է որ ապրանքներու թարմութեան և մաքրութեան շնորհիւ մնալուն գիրք մը բռնած է տարիներէ ի վեր :

Նպարեղէններու վերաբերեալ ամէն ինչ՝ վոքը թէ մեծ քանակութեամբ զնոյններու համար, անթերի են սոյն վաճառատեղոյն մէջ :

Մեր յաճախողները գոհ թողելու նպատակաւ՝ սպասելի ապրանքներու ընտրութեան և գնումին ատեն շատ խնամք եւ նոյն իսկ ըմբռնողութիւն կընենք. Ուրեմն նպարեղէնի վերաբերեալ ամէն ապրանք թարմ է եւ մաքուր մեր քով :

Կշիւր, որուն համար ուրիշ շատ անդեր գանգատանաց պատճառ տուած է, մեր քով գոհունակութիւն միայն առնած է. վկայ մեր բազմաթիւ յաճախողները, որոնք միշտ զսօ մնացած են :

Ձեր տունին նպարեղէնի բոլոր պէտքերուն համար դիմեցէք ի Պապ-Էլ-Խալբ՝ մեր վաճառատեղին եւ չ'պիտի զՂԷՔ :

ԿԱՐԱՊԵՏ ԳԱՍՍՐԱՅԱՆ

#### ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

« Արշալոյս » ի տպարանին մէջ, Շէրիֆ բաշայի պարտէզին դիմաց՝ կը վաճառուին Պ. Արշակ Զօպանեանի հետեւեալ հեղինակութիւնները :

1. Քեթուածներ Գին 5 Քր.
2. Մկրտիչ Պէշիկթաշիանի կեանքն ու գործը Գին 5 Քր.

ԵՂՂՈՎՈՒԴԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Թիւ 1 Թրքուհին 50 սանթիմ  
« 2 Հիւլէն 50 »  
« 3 Սուլթան Համիտ ինչպէս մեռաւ Գին 1 Քրանց

Ազգային սահմանադրութիւն սակաւաթիւ օրինակներ Գին 12 զր.